


ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱԿՈՒՄԲԻ ՆԻՍ՝ ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՐՎԱԾ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԹԵՄԱՅՈՎ

29.10.2015 10:19



Տեղեկացնում ենք, որ այսօր՝ 29.10.2015թ. ժամը 18.30-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ակումբը Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA/ROLI) հայաստանյան ներկայացուցչության հետ համատեղ կազմակերպում է քննարկում-դասընթաց, որի շրջանակներում քննարկվելու է ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ դրված ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը: Ձեկուցող՝ Աննա Մարգարյան (նախագծի համահեղինակ, փաստաբան, ի.գ.թ.):

Դասընթացը տեղի կունենա ՀՀ փաստաբանների պալատում (հասցե՝ ք.Երևան, Ջաքիյան 2, 4-րդ հարկ):

Ակումբի նիստին մասնակցած փաստաբաններին հաշվարկվելու է 4 պարտադիր վերապատրաստման ժամ:

Գրանցվելու համար կարող եք էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել ani.gharibyan@advocates.am էլ. հասցեին՝ նշելով Ձեր արտոնագրի համարը և հեռախոսահամարը: